ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը
ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյան

2. Գործուղման վայրը և ժամկետները.
ք. Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) նոյեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 29-ը ներառյալ

3. Հրավիրող կողմը.
ՌԴ հաշվիչ պալատ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

ՌԴ հաշվիչ պալատի նախագահի պաշտոնակատար Գ. Իզոտովայի հրավերով 2023 թվականի նոյեմբերի 28-ին ք.Մոսկվայում կայացած ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն հաշվեքննիչ մարմինների համատեղ կոլեգիայի նիստին մասնակցություն:

5. Քննարկված թեմաները

- Քննարկվել են ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն հաշվեքննիչ մարմինների համատեղ վերահսկողական միջոցառման արդյունքներով կազմված ամփոփ հաշվետվության, ինչպես նաև Համաձայնագրով նախատեսված միասնական ակտի հաստատման հարցերը:
- Քննարկվել է ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն հաշվեքննիչ մարմինների կողմից ԵԱՏՄ անդամ պետությունների լիազորված մարմիններում (գանձապետարաններում) անդամ պետությունների բյուջեներ ներմուծման մաքսատուրքերի փոխանցման կարգի պահպանման նկատմամբ համատեղ վերահսկողական միջոցառման արդյունքներով կազմված ամփոփ հաշվետվությունը:
- Առանձնացվեցին խնդիրներ, որոնք առ այսօր դեռ չեն կարգավորվել: Մասնավորապես, դա վերաբերվում է Ղազախստանում ընդերք օգտագործողների կողմից 2014-2022թթ. ժամանակահատվածում վճարված ներմուծման մաքսատուրքերի գումարներին, որոնք շարունակվում են չբաշխվել ԵԱՏՄ անդամ պետությունների միջև և դրա մասին արձանագրվել է նաև նախորդ տարիների հաշվետվություններում: Տվյալ հարցի կարգավորման նպատակով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից

հավանության է արժանացել և ներկայացվել է ԵԱՏՄ պայմանագրում փոփոխություն կատարելու նախագիծ, որի ներպետական համաձայնեցման ընթացակարգերը Հայաստանում, Ղազախստանում և Ղրղզստանում ավարտվել են, իսկ Բելարուսում և Ռուսաստանում դեռ ոչ: Վերոհիշյալ խնդրի առընչությամբ ղազախական կողմը նախորդ տարիների պես հաշվետվությունը ստորագրել է հատուկ կարծիքով:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ընդհանուր առմամբ մասնակիցները բարձր գնահատեցին կատարված աշխատանքը և նշվեց, որ բարձրագույն հաշվեքննիչ մարմինների կողմից պատշաճ իրականացվել է ԵԱՏՄ պայմանագրով նախատեսված պարտավորությունները:

Որոշվեց, որ 2024 թվականի համատեղ հսկողական միջոցառման պատասխանատու մարմին է հանդիսանում ՀՀ հաշվեքննիչ պալատը և համակարգելու է այդ աշխատանքները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Նիստի ավարտին ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն հաշվեքննիչ մարմինների պարտավորությունների ղեկավարները հաստատեցին ամփոփ հաշվետվությունը, ինչպես նաև միասնական ակտի ձևը և ստորագրվեցին ամփոփ փաստաթղթերը:

8. Ստորագրությունը, ամսաթիվը:

04/12/2023թ.

Recoverable Signature

X

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN AVAG 2003930574